

Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանն այցելել է մարզի Նուռնուս, Արզնի, Վերին Պտղնի և Պտղնի համայնքներ: Մարզի ղեկավարը նախ եղել է Նուռնուս համայնքի միջնակարգ դպրոցում, զրուցել կրթօջախի մանկավարժների հետ, լսել վերջիններիս կողմից բարձրացվող հարցադրումներն ու նրանց հետ համատեղ քննարկել կրթական գործընթացների արդյունավետությանը միտված մի շարք առաջնահերթություններ: Կ. Գուլոյանին ներկայացվել են նաև Նուռնուս համայնքի ենթակառուցվածքների գործունեության հիմնական ուղղությունները և համայնքի զարգացման հեռանկարային ծրագրերը: Մարզպետն այցելել է նաև Արզնի համայնք, եղել է տեղի միջնակարգ դպրոցում և մանկապարտեզում, զրուցել նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակիցների հետ, անդրադարձ կատարել համայնքում համակողմանի կրթական միջավայր ձևավորելու անհրաժեշտություններին: Այնուհետև Կոտայքի մարզպետը ծանոթացել է Արզնիի բժշկական ամբուլատորիայի գործունեության ուղղություններին, զրուցել հաստատության աշխատակիցների հետ՝ կարևորելով համայնքի բնակչության բուժսպասարկումը լիարժեք կազմակերպելու հանգամանքը: Մարզպետ Կ. Գուլոյանը հանդիպում է ունեցել նաև Վերին Պտղնի համայնքի միջնակարգ դպրոցի մանկավարժների հետ, ապա այցելել նաև համայնքի բժշկական ամբուլատորիա, ծանոթացել հիշյալ հաստատությունների աշխատանքային պայմաններին: Վերին Պտղնիում մարզի ղեկավարին ներկայացվել են նաև համայնքի զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսված և իրականացվող աշխատանքների հիմնական մոտեցումները: Աշխատանքային այցելությունն ամփոփել է Պտղնի համայնքում, որտեղ Կոտայքի մարզպետը ծանոթացել է միջնակարգ դպրոցի գործունեությանն ու շենքային հարմարություններին, զրուցել կրթօջախի աշխատակիցների հետ: Այստեղ համայնքի ղեկավարի և տեղի բնակիչների հետ միասին քննարկել են նաև Պտղնիում առաջիկայում նախատեսվող զարգացման ծրագրերի գերակա ուղղությունները: